## ՀՀ ԴԱԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

*1993 թ. մարտին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովը, որի օրակարգում դրված էր Վ. Հ. Համբարձումյանի դիմումը իրեն պրեզիդենտի պարտականություններից ազատելու մասին։*

*Ժողովը որոշեց՝*

*Բավարարել ՀԳԱԱ պրեզիդենտ Վիկտոր Համազասպի Համբարձումյանի խնդրանքը իրեն ՀԳԱԱ պրեզիդենտի պարտականություններից ազատելու մասին։*

*Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպման և գործունեության գործում ունեցած բացառիկ ծառայության համար Վ. Հ. Համբարձումյանին հայտնել շնորհակալություն։*

*Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում ստեղծել պատվավոր պրեզիդենտի միանդամյա կարգավիճակ։*

*Սահմանել պատվավոր պրեզիդենտի իրավունքներն ու պարտականությունները։*

*Վիկտոր Համազասպի Համբարձումյանին միաձայն ընտրել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր պրեզիդենտ։*

*Ապրիլի 8-ին կայացած ընդհանուր ժողովում քննարկվեց ՀԳԱԱ նոր պրեզիդենտ ընտրելու հարցը։ Ժողովում հլուսիր ունեցան Է. Մ. Գաբրիելյանը, Վ. Ս. Նալբանդյանը, Լ. Հ. Հախվերդյանը, Ա. Թ. Քուչուկյանը, Մ. Գ. Ներսիսյանը։*

*Ընդհանուր ժողովը ՀԳԱԱ պրեզիդենտ ընտրեց Ֆադեյ Տաճատի Սարգսյանին։*

* * *

*Ֆ. Տ. Սարգսյանը ծնվել է 1923 թ. սեպտեմբերի 18-ին, Երևանում։ 1940 թ. ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, այնուհետև ուսումնառությունը շարունակել է Լենինգրադում և 1946 թ. ավարտել Կապի զինվորական ակադեմիան։ Դիվիզիոն-մայոր Ֆ. Տ. Սարգսյանը երկար տարիներ պատասխանատու պաշտոններ է վարել ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունում։ 1963 թ. նա աշխատանքի է անցել Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում՝ նախ որպես գլխավոր ինժեներ, իսկ 1967 թ. մինչև 1977 թ. հունվարը եղել է այդ ինստիտուտի տնօրենը։ 1977—1989 թթ. նա Հայաստանի Հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահն էր, 1990 թ. Ակադեմիայի մեխանիկայի, ինֆորմատիկայի և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարը։ 1992 թ. ընտրվել է Ճարտարագիտական միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ։ Նա Հայաստանի միջազգային գիտական հիմնադրամի նախագահն է։*

*Ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը տեխնիկական գիտությունների դոկտոր է, կառավարման պրոցեսների ճանաչված մասնագետ։ Նա հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների։ 1971 թ. ընտրվել է ԳԱ թղթակից ան-*

դամ, իսկ 1977 թ.՝ ակադեմիկոս, երկու անգամ՝ 1971 և 1981 թթ. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի, իսկ 1979 թ.՝ Ուկրաինայի պետական մրցանակի։

Ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանի անմիջական ղեկավարությամբ Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ-ում իրականացվել են կառավարման ավտոմատացված համակարգերի, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ու սարքավորումների մի շարք նոր տեսակներ, որոնք բարձր գնահատականի են արժանացել և լայն կիրառություն գտել ժողովրդական տնտեսության մեջ։ Նրա գործուն մասնակցությամբ և ղեկավարությամբ ստեղծվել է լայն կիրառում գտած ավտոմատացման խոշոր համալիր։ Մեծ են նրա ծառայությունները ժողովրդական տնտեսության, մասնավորապես ռազմաարդյունաբերական համալիրի նյութատեխնիկական բազայի ամրապնդման ու զարգացման բնագավառում։

## ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1993 թ. հունիսի 2-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, ուր քննարկվեցին Ակադեմիայի 1992 թ. աշխատանքների արդյունքները։ Ժողովի աշխատանքներին մասնակցում էին Ամենայն հայոց կաթողիկոս, Ակադեմիայի պատվավոր անդամ Վազգեն Առաջինը, ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը, պե-